ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 16-Ա
14 ՀՈՒՆՎԱՐ 2022Թ

ԳՈՀԱՐ ԲԱԲԱՅԱՆԻՆ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՏԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 1.8-րդ մասի ե) կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 3-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 2.1-րդ կետով և հիմք ընդունելով Գոհար Բաբայանի 2022 թվականի հունվարի 14-ի դիմումը /Մ-0335-2022 /.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2022 հունվարի 14-ից Գոհար Բաբայանին նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, նրա հետ

կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր, մինչև օրենքով սահմանված կարգով թափուր պաշտոնի հիմքի վերացումը:

2. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություններին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել հանձնման- ընդունման աշխատանքները:

3. Հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:

1/14/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ